

≠ 58 ≠

ԼԿՅԵՄ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ  
№ 6 ՔԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ Ու 6

== Գ Յ Ո Ւ Ղ Ը ==

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՃԱՆԱՊԱՐԿԻՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926


† 83 †

10 JUN 1926

ԼԿՅԵՄ Օ.Ռ.Ս.ՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ  
№ 6 ՔԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 6

---

Գ Յ Ո Ւ Ղ Ը  
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ



---

Պետական հրատարակչություն, Յերեվան — 1926

ԳՅՈՒՂԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՆԱՊԱՐԻՆ  
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՄԻՋՈՑ-  
ՆԵՐԸ

«Գյուղատնտեսական տնտեսության զարգացումը պետք է ընդհանուր առմամբ իրենցում պարզապես ցուցաբերի ընթացքում տեղի ունեցած վերելքին, գյուղատնտեսությունը դեռևս գտնվում է ցածր մակարդակի վրա:

Կուսակցության և խորհրդային իշխանության առաջ խնդիր է դրված անընդհատ բարձրացնել գյուղատնտեսությունը, բարձրացնել նրա տեխնիկան, այսինքն զործագրել հողի գյուղատնտեսական մեքենաներ, բարելավել սերմնափոխությունը և այլն: Կուսակցության 14-րդ համագումարի բանաձևում ասված է, վոր պետք է «աշակցել և առաջ մղել գյուղատնտեսության զարգացումը»:

Ինչպես տեսանք յերրորդ զբույսում, առանց գյուղատնտեսության զարգացման անկարելի չէ արդյունաբերության աճումը: Միևնույն ժամանակ կուսակցությունն աշխատում է այնպես անել, վոր բարձրանան գլխավորապես վոչ թե



1-228491

№ 473

Գրապատճեն № 900 (բ)

Տիրամ 4000

Պետրասի ստալին տպարան վարչարչատոմ

հարուստ, այլ չքավոր և միջակ տնտեսությունները:

«Պետք է շարունակել ձգտել գյուղատնտեսության արտադրության հետագա առավելագույն հնարավոր ավելացման և միևնույն ժամանակ մեծ չափով աջակցել գյուղի չունևոր տարրերին բարձրացնելու համար նրանց տնտեսությունը և սահմանափակելու կուլակի շահագործական ձրգտումները»: (Կուսակցության 13-րդ համագումարի բանաձևերից):

Գյուղատնտեսության զարգացման հարցերին նվիրված էյին մի շարք վորոշումներ կուսակցության 1925 թվի ապրիլյան կոնֆերանսի և կենտկոմի նույն թվի հոկտեմբերյան պլենումի կողմից, և այդ վորոշումները հաստատվեցին կուսակցության 14-րդ համագումարի կողմից:

Ծանոթանանք այդ վորոշումներից մի քանիսի հետ:

Հողի վարձակալության քեթեվացումն ու բաց վորակացումի վարձման քուլուբուրները. ճրացման համար կուսակցության կողմից նշած միջոցների թվում մեծ նշանակություն ունի հողի վարձակալության թեթևացումն ու գյուղացիական տնտեսության մեջ բանվորական ուժի վարձման թույլ տվումները: Քննության առնենք առանձին առանձին այդ յերկու միջոցները:

Ո՞վ է այժմ գյուղում վարձակալության վերցնում հողը: Մեծագույն ղեպքերում հողը վարձակալում են ավելի հարուստ գյուղացիները չունևորներից, տնտեսապես ղեռ չամրացած միջակից: Ահա թե ինչ է ասում ընկ. Բուխարինն այն մասին, թե ինչ հետևանք ունեցավ վարձակալության արգելումը:

«Մի մարդ ունի որենքով նրան հասնող վոր ջրանակությամբ հող, բայց չունի ինվենտար ու լծկան: Ինքը մշակել իր հողը չի կարող, կուլակային տարրերն ուզում են չունևորից վարձակալել նրա հողը, բայց վարձակալությունն արգելված էր: Հետևանքը լինում էր այն, վոր չքավորը, խախտելով մեր որենքը, հողը վարձու յեր տալիս: Իսկ կուլակը, ոգտվելով հանգամանքից, նրան ավելի աժան էր վճարում, քան կվճարեր այն ղեպքում, յեթե վարձակալությունը թույլատրված լիներ, կատարվեր աշխարա: Կուլակը վճարում էր տասը-քսան կոպեկ մի ղեսխատինին, և այդ անպատիժ էր անցնում»:

«Արդյոք ձեռնառն յե մեզ այդ, — այնուհետև հարցնում է ընկ. Բուխարինը. — հողը նրա համար էր արդյոք ազգայնացված, վորպեսզի ոգտվելու տանք կուլակին: Ավելի լավ չե՞ արդյոք որենքով թույլատրել վարձակալությունը և հետևել, վորպեսզի ստրկական գործարքներ չլինեն»:

Այդպիսով վարձակալութեան թույլատրութեան մեջ շահագրգռված եյին ամենից առաջ չքավորը և միջակները այն մասը, վորն ստիպված է հողը վարձակալութեան տալու:

Թոտավորապես նույն դրութեան մեջ եր բանվորական ուժ վարձելու հարցը: Չքավոր անտեսութեանները մի վորոշ քանակութեանն էր վիճակի չէ ինքը մշակելու իր հողը: Առաջիկա շրջանում մենք դեռ բավականաչափ դրամական միջոցներ չենք ունենա, վորպեսզի այդ անտեսութեաններն ապահովենք անհրաժեշտ ինվեստարով, և գյուղացիական չքավորութեան մի մասը ստիպված է բատրակ վարձվել ավելի հարուստ գյուղացու մոտ:

Բատրակ վարձելու արգելումն այն հետևանքն ունեցավ, վոր սկսեցին զարգանալ վարձելու գաղտնի ձևերը, և վարձվողը դրվում էր անշահավետ պայմաններում: Կուլակը, կապված լինելով վորոշ ռիսկի հետ, բատրակին վարձում էր ամենաստրկացուցիչ պայմաններով: Յեւ վորովհետև բանվորական ուժի վարձումն արգելված էր, արհմիութեանները հնարավորութեան չունեյին պաշտպանելու բատրակի շահերը կուլակի հանդեպ: Բատրակ վարձելու թույլտվութեանը, պետական մարմինների կողմից վարձման պայմանների կանոնավորումը, արհմիութեանների

վերահսկողութեանը—այս բոլորն ամենից առաջ պաշտպանում են չքավորի շահերը:

Բացի այդ, մի կողմից վարձակալութեան շնորհիվ կմշակվեն ներկայումս պարապ մնացած գյուղացիական հողամասերը, իսկ մյուս կողմից գյուղատնտեսութեան մեջ կգործադրվի վարձու աշխատանքը, հանգամանքներ, վոր կնպաստեն գյուղական գործազրկութեան կրճատմանը: Գյուղում կա բանվորական ազատ ուժ, վորն իրեն համար գործազրկութեան չի գտնում: Քաղաքը նույնպես չի կարող աշխատանք տալ գյուղական բոլոր գործազուրկներին:

Իրանից ամենից առաջ տուժում է գյուղի չքավորը: Յեւ վարձակալութեան թեթևացումն ու բանվորական ուժ վարձելու թույլտվութեանը կնպաստեն, վորպեսզի բանվորական ավելորդ ուժը գործազրկութեան գտնի հենց գյուղի ներսում:

Ինչպես տեսնում ենք, և՛ վարձակալութեան դուրսութեանը, և՛ բանվորական ուժ վարձելու թույլտվութեանը, վոր առաջադրել էր 14-րդ կուսկոնֆերանսը, բղխում են ամենից առաջ գյուղի չքավոր և միջակ խավերի շահերից:

Արդյոք այդ նշանակում է, վոր հիշյալ վորոշումներից կուլակը վոչինչ չի շահի: Վճչ, այդպես ասել՝ միևնույն է, թե փակել աչքերը իրականութեան հանդեպ: Անկասկած այդ միջոցները

վորոշ չափով կնպաստեն կուլակային տնտեսու-  
թյունների հարստացման:

Կուլակի հանդեպ խուճապի մատնված ուս-  
պուղիքիան, վոր հանդես եր յեկել 15-րդ համա-  
գումարում, 14 րդ կուսկոնֆերանսի վորոշում-  
ները մեկնաբանում եր վորպես կուլակին արվող  
գիջում:

Ընկ. Ստալինը համեմատում ե 14-րդ կուս-  
կոնֆերանսի վորոշումները նոր տնտեսական քա-  
ղաքականության հետ:

Ազատ առևտուր մտցնելն, ինչպես տեսանք  
յերրորդ գրուցում, մասամբ կենդանացրեց կա-  
պիտալիզմը: Բայց այդ, իհարկե, չի նշանակում,  
վոր նոր տնտեսական քաղաքականությունն ամ-  
բողջովին ու լիովին զիջում եր, վոր արվում եր  
կապիտալիստներին: Ընդունում ենք, վոր ազատ  
առևտուրն ուժեղացրեց նեպմանին ու կուլակին:  
Բայց ավելի մեծ չափով նոր տնտեսական քա-  
ղաքականությունն ամրացրեց պրոլետարիատի  
տնտեսական իշխող բարձունքները, ամրացրեց  
պետական արդյունաբերության մերձեցումը չքա-  
վոր ու միջակ տնտեսությունների հետ: Թեև  
ՆեՊ-ը կենտրոնացրեց կապիտալիզմը, բայց նա  
մեզ որեցոր մոտեցնում ե սոցիալիզմին, մինչ-  
դեռ կապիտալիստական տարրերը յետ են մղ-  
վում: Նույնպես պետք ե ասել և 14 րդ կուս-

կոնֆերանսի վորոշումների մասին: Այդ վորո-  
շումներեց, հենց սկզբեց, իհարկե, կշահի կուլա-  
կը, բայց մեծ չափով կշահեն գյուղի չքավոր  
ու միջակ խավերը՝ կշահի յերկրի ամբողջ տն-  
տեսությունը. — ա) հարստացած կուլակի ճարպը  
մենք կհավաքենք հարկերի միջոցով, բ) սպ-  
րանքաշրջանառության ուժեղացումը նույն-  
պես կավելացնի պետական միջոցները, գ) այդ  
միջոցներն ու հարկերը կգործադրենք յերկրի ին-  
դուստրիացման վրա, հետևապես, նրանք հնարա-  
վորություն կտան ուժեղացնելու չքավորին ու  
միջակին ցույց տրվող ոգնությունը: Ահա 14-րդ  
կուսկոնֆերանսի վերոհիշյալ վորոշումների  
վերջնական նպատակը:

Գյուղ ա ս ց ց Ե - Հողագործության բարելավ-  
սուրյան բար- ման համար հսկայական նշանա-  
ն ր ացման հա- կություն ունի հողաշինարարու-  
մ ա ր ձեռն առնը- թյունը: Կենտրոնական կոմիտեյի  
վ ո ղ ա յ լ Կ Ի ջ ո յ - 1925 թվի ապրիլյան պլենումի  
ց Ե ր և . բանաձևում այդ առթիվ ասված ե.

«Անհրաժեշտ ե առավելագույն չափով ձե-  
ռնտու վարկ հատկացնել հողաշինարարության  
համար: Բացի դրանից՝ պետական բուջեյից ան-  
հրաժեշտ ե հատկացնել առնվազն յերեք միլիոն  
ուրբլի չքավոր տնտեսությունների համար՝ ձրի  
հողաշինարարական աշխատանքներ կատարելու  
նպատակով: Հողային մարմինների համապատաս-

խան ամբողջ աշխատանքում, և ամենից առաջ նպաստները ու վարկերը հատկացման առթիվ, հողաշինարարությունը համաձայնեցնել բազմա-գաղտին, լայնաշերտին և այլոց անցնելուն»:

ՌԽՍՖՆ մեջ 1924—25 թվի չքավոր բնակ-չության հողաշինարարության համար հողժող-կոմատը հատկացրել է մեկ միլիոն 625 հազար ռուբլի, հողաշինարարական աշխատանքներ են կա-տարվել 2 միլիոն 710 հազար ղեսիատին հողի վրա, հողացվել են 270 հազար չքավոր տնտե-սության (ծխի) կարիքներ: 1925—26 թվին հա-տկացվել է 3 միլիոն 529 հազար, համարյա յերկու անգամ ավելի: Այդ միջոցներով հողժողկոմատի ծրագրով հողաշինարարական աշխատանքներ կկա-տարվեն մոտ վեց միլիոն ղեսիատինի վրա, կհո-գացվեն մոտ 600 հազար չքավոր տնտեսության կարիքներ:

Գյուղատնտեսական վարկը զարգանում է: ԽՍՀՄ Գյուղատնտեսական կենտրոնական Բանկն իրան նպատակ է դրել աժան վարկի մի-ջոցով չթողնել, վորպեսզի չքավոր գյուղացիա-կան տնտեսությունները ցածր գներով վաճառեն իրենց մթերքները: Բանկը չունևոր գյուղացուն վարկ է տալիս (հացի գրավով), այդպիսով իսկ նրան հնարավորություն է տալիս մի կերպ յուր գնալու և իր ավելցուկը շուկայում վաճառելու

համար սպասելու նպաստավոր մոմենտի: Բանկն աժան վարկ է տալիս արտադրական նպատակ-ներով՝ նոր գործիքներ, ազնվացեղ անասուն գնելու համար: Կենտրոնական կոմիտեյի 1925 թվի հոկտեմբերյան պլենումի վորոշումների հա-մաձայն, Գյուղատնտեսական Բանկին կից կազ-մակերպված է հատուկ ֆոնդ չքավորներին ա-ռանձնապես շահավետ պայմաններով վարկավո-րելու նպատակով:

Գյուղացիական տնտեսություններին, առա-ջին հերթին չունևորներին ոգնելու համար պե-տությունը բաց է թողնում արտոնյալ պայման-ներով գյուղատնտեսական մեքենաներ: Կարի-քավոր տնտեսություններին տրվում է սերմացուի փոխառություն: Մեծ աշխատանք է կատարվում մելիորացիայի, այսինքն՝ ճահճոտ վայրերի չո-րացման բնագավառում:

Սակայն այս բոլոր միջոցները դեռևս մեղ լիակատար վատհուլթյուն չեն տալիս, վոր գյու-ղի զարգացումը կընթանա այն ուղղությամբ, վոր ցանկալի յե բանվոր դասակարգին: Ի՞նչպես անել, վոր գյուղի զարգացումն ընթանա չքավոր ու միջակ տնտեսությունների բարձրացման ուղիով: Ի՞նչպես անել, վոր հարստանան վոչ թե գյուղի ունևոր խավերը, այլ վորպեսզի անընդհատ բա-

րելավեն իրենց տնտեսութիւնները գյուղացիական լաշն խավերը:

Այդ կարող ե գյուղում ապահովել միայն կոոպերացիայի գարգացումը:

### ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻՉՄ ՏԱՆՈՂ ԼԱՅՆ ՃԱՆԱՊԱՐՀՆ Ե

ԼԵՅԻՅԵԻ Կոոպերացիան Լենինը քանիցս ասել է, վոր բաժնի վ ծուգիւր. մեր յերկրում մենք սոցիալիզմ կարող ենք կառուցել միայն գյուղացիութեան հետ միասին: Չի կարելի սոցիալիզմի շինարարութիւնը պատկերացնել այսպես. քաղաքում, դիցուք, մենք կսկսենք ամրացնել սոցիալիստական արդյունաբերութիւնը, իսկ գյուղում, քաղաքից անկախ, այնպես ել կմնան ՉՉ միլիոն գյուղացիական մեկուսացած տնտեսութիւններ: «Սոցիալիզմի շինարարութիւնը մտադիր ե հիմնական վերակերտման յենթարկել ամբողջ գյուղատնտեսութիւնը» (Բուխարին):

Կուսակցութիւնն իր ամբողջ քաղաքականութեան միջոցով ձգտում է, վորպեսզի գյուղատնտեսութիւնն ընթանա բանվոր դասակարգի հետ: Այդ նշանակում է գյուղացիութեան ամբողջ մասսային սոցիալիզմի շինարարութեան մեջ քաշել: Հնարավոր է այդ արդյոք: Հնարավոր է արդյոք, վոր մանր սեփականատեր գյուղացին

մասնակցի սոցիալիզմի շինարարութեանը, վորը մտադիր է վոչնչացնել բոլոր տեսակի մասնավոր սեփականութիւնները:

Այո, հնարավոր է — ասել է մեզ Լենինը: Բայց դրա համար, — սովորեցրել է Լենինը, — պետք է սովորել գործնականորեն կառուցել սոցիալիզմն այնպես, վոր յուրաքանչյուր մանր գյուղացի կարողանա մասնակցել այդ կառուցմանը: Գյուղացիութեան հետ միասին սոցիալիզմը կառուցել կարելի յէ միայն կոոպերացիայի միջոցով: Այս է Լենինն ավանդել կուսակցութեանը կոոպերացիայի մասին իր գրած հոդվածում: Յեւ մեր պայքարի յուրաքանչյուր ուրը հաստատում է կոոպերացիայի միջոցով մեր ամբողջ տնտեսութիւնը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու Լենինյան այս ծրագրի ճշտութիւնը:

Մենք կսկսենք կոոպերացիայի հետ ծանոթանալ նրա առանձին ճյուղերից՝ արհեստավորական (տնայնագործներին միացնող), սպառողական և գյուղատնտեսական կոոպերատիւներից: Այստեղ մենք քննութեան առնենք վերջին յերկու ճյուղերի աշխատանքը:

Սպառողական կոոպերացիայի Սպառողական կոոպերացիան. գլխավոր խնդիրն է՝ գյուղին մատակարարել այն բոլոր իրերը, վոր անհրաժեշտ են գյուղացիութեանը անձնական սպառման համար:

Սպառողական կոոպերացիան պետական արդյունաբերութեան համար «ապրանքատար շղթայի գլխավոր հիմնական ողակն է» (14-րդ կուսկոնֆերանսի բանաձևից)։ Կուսակցութիւնը ձգտում է, վորպեսզի ժամանակին պետական արդյունաբերութեան ապրանքների ամբողջ մասան գլուղ գնա միայն սպառողական կոոպերացիայի միջոցով (բացառութեամբ գյուղատնտեսական ապրանքների, վորը գլուղին մատակարարելու յէ գյուղատնտեսական կոոպերացիան)։

Ներկայումս մենք հսկայական տարբերութիւն ենք գտնում արդյունաբերական ապրանքների մեծածախս և մանրածախս գների միջև։ Գործարանից մինչև գլուղական սպառողին հասնելն ապրանքի գինը յերբեմն ավելանում է 2-3 անգամ։ Գնի այդ տարբերութիւնը վերցնում է մասնավոր առևտրականը, վորի ձեռքով անցնում է ապրանքը։ Գոյութիւն ունեցող հատվածաբարձր գները յերբեմն միանգամայն խանգարում են արդյունաբերական ապրանքների գների իջեցման քաղաքականութիւնը։

Սպառողական կոոպերացիան իրեն խնդիր է դնում՝ պաշարել գների աճման դեմ և աջակց անելու վոր գների մեջ յեղած տարբերութիւնը մնա բանվորների ու գյուղացիների տրամադրութեան տակ, այլ վոչ թէ մտնի ապրանքաուղուների ու չարչիների գրպանը։

Սպառողական կոոպերացիան գյուղացուն տալիս է ավելի աժան գնով ապրանք։ Նա ձեռընտու յէ յուրաքանչյուր գյուղացուն իր իսկ անմիջական շահերի տեսակետից։ Միևնույն ժամանակ սպառողական կոոպերացիան ամբողջում է պետական արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան կապը։ Նա աստիճանաբար հաղթահարում է մասնավոր առևտրական կապիտալը և այդպիսով իսկ ուժեղացնում է մեր տնտեսութեան սոցիալիստական տարրերը։

Այստեղ մենք պարզ տեսնում ենք, թէ ինչպես կոոպերացիայի բնագավառում միանում և զուգադիպվում են յուրաքանչյուր առանձին գյուղացիական տնտեսութեան և մի ամբողջ տնտեսական սոցիալիստական շինարարութեան շահերը։

Կոոպերացիայի այս ճյուղը կան կոոպերատիվ տակերում է հետեյալ նպատակով։ — Նա գյուղացիական, և առաջին հերթին չունևոր տնտեսութիւնները համար կազմակերպում է մատչելի վարկ, այսինքն գյուղացուն հնարավորութիւն է տալիս իր տնտեսական կարիքների համար փոխառութիւն ստանալ, չդիմելով վաշխառուին կամ առևտրականին։ Նա կազմակերպում է գյուղատնտեսական մթերքների սպառումն ու վերամշակումը։

Նա մատակարարում է գլուղին արտադրու-

թյան միջոցներ՝ գյուղատնտեսական մեքենաներ, սերմացու:

Նա զանազան այլ միջոցներ է ձեռք առնում բարելավելու համար հողի մշակումն ու ոգտագործումը:

Գյուղատնտեսական կոոպերացիան նպատակ է կոչվելով հողագործության բոլոր հնարավոր ձևերի զարգացման:

Ինչպես տեսնում ենք, գյուղատնտեսական կոոպերացիան աշխատանքի լայն ասպարեզ ունի: Այդ աշխատանքն ավելի լավ ուսումնասիրելու համար տեսնենք, թե ինչպես են աշխատում կոոպերատիվ յերեք առանձին միավորներ՝ Վորոնցովսկի գյուղատնտեսության ընկերությունը, Շոենգայի գավառակի գյուղատնտեսական կոոպերացիան և «Տրուդ» («Աշխատանք») արտելը:

Վորոնցովսկի գյուղատնտեսական ընկերությունը.

«Թե ինչպես է իսկական կոոպերացման սկզբունքը մուտք գործում հին գյուղը, այդ առթիվ որինակ կարող է ծառայել Վորոնցովսկի գյուղատնտեսական ընկերությունը:

Այդ ընկերությունը կազմակերպվել է 1923 թվի փետրվարի 7-ին: Նրա հիմնադիրներն են յեղել 18 հոգի: Այժմ (նկարագրությունը վերաբերում է 1924 թվին) նա ունի 30 անդամ: Վճարը յեղել է 50 կոպեկ, փայտվճարը՝ տնատերից 5 փութ տարեկան (Р 0 Ж 6):

Փետրվարից մինչև ապրիլ ընկերությունը ավել է 895 ուրբու փոխառություն, լծկան ձի գնելու համար 25 գյուղացու ավել է 3 հազար 505 ուրբի, կով գնելու համար՝ 705 ուրբի և մանր ինվենտար գնելու համար՝ 60 ուրբի:

Նորությունն այդ գյուղատնտեսական ընկերության մեջ թեկուզ հենց այն է, վոր վարկ ստացած 26 գյուղացիներից ընդամենը 2 հոգի յեն ձի ունեցել (այն էլ վոչ լծկան), 34 գյուղացիներից, վորոնց տրված է սերմացուի վարկ, մոտավորապես կեսը լծկան է ունեցել, իսկ կեսը զուրկ է յեղել լծկանից: Ընկերության անդամների կազմի ճնշող մեծամասնությունը չունեւ վոր գյուղացիներ են: Ընկերության գոյությունը ընթացքում 10 հոգի գնել է լծկան, մասամբ միատեղ:

«... Մեր գյուղի պատկերի համար չափազանց բնորոշ է, վոր այդ ընկերության վրա անգամ անցյալը դրել է իր ծանր բեռը: Մուծման գործարքները համարյա չեն ծավալվում, և բնակչության ընկերության ստացած գումարները չնչին են: Պետական կոոպերատիվ ղրամական ոգնությունը, վոր պետք է լինի միայն միջուկը, վորի շուրջը պետք է համապարփվին գյուղացիներից գանձած միջոցները, առայժմ այդ ընկերության միակ ղրամական միջոցներ են խաղում: Ըն-

1-22889



կերության անդամները հողն առայժմ անցյալի պես ցրված է 15 բաժինների: Տնտեսավարության ձևերով ընկերության անդամները վոչնչով չեն տարբերվում հասարակության մնացած անդամներից»:

Մեր թված խնդիրներից վերն է կենսագործում Վորոնցովսկի գյուղատնտեսական ընկերությունը:

Նա վարկ է կազմակերպել չունևոր գյուղացիական տնտեսությունների համար: Այդ վարկը, ճիշտ է, համեմատաբար թանգ է, բայց և այնպես նա զգալի չափով ավելի ձեռնտու յե գյուղացիական տնտեսությունների համար, քան վորեն կուլակի վաշխառուական փոխառությունը:

Ընկերության աշխատանքի շնորհիվ նրա անդամներն արտադրության միջոցներ, գյուղատնտեսական կենդանի ինվենտար, սերմացու ձեռք բերելու հնարավորություն ստացան: Վարձակայանը նույնպես նպաստում է ընկերության անդամների տնտեսության զարգացմանը:

Բայց Վորոնցովսկի ընկերությունն իր գոյության մի տարվա ընթացքում դեռևս չի կարողացել կազմակերպել իր անդամների տնտեսությունների արտադրության սպառումը:

Պետք է հիշատակել նաև, վոր ընկերությունը դեռևս չի կարողացել ազդել իր անդամ-

ները տնտեսության ձևերի վրա. ընկերության անդամների տնտեսությունների մակարդակը շատ քիչ է տարբերվում շրջապատող գյուղացիների տնտեսություններից: Ընկերության մեջ համախմբվող գյուղացիական տնտեսությունների մեջ կոլլեկտիվ տնտեսավարության դիմելու ձգտում չի նկատվում:

Ընկերության տված ոգուտն ակնհայտ է այդ ընկերության մեջ մանող յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության համար: Սակայն ինչ նշանակություն ունի Վորոնցովսկի ընկերությունը գյուղի սոցիալիստական զարգացման համար, մի լերկրում սոցիալիզմ կառուցելու համար:

Պատասխանը պարզ է: Գյուղատնտեսության մեջ այն նվաճումները, վոր ձեռք է բերել ընկերությունը, կնպաստեն միջակ և չքավոր տնտեսությունների բարձրացմանը: Գյուղատնտեսության բարձրացումն այստեղ կուլակներ չի առաջացնում, այլ նպաստում է, վոր բարելավվի չքավորի ու միջակի դրությունը:

30 գյուղացիական տնտեսություն կապ են հաստատում ամբողջ պետության տնտեսության հետ: Փոխանակ կախումն ունենալու մասնավոր կապիտալիստ՝ կուլակից, կախումն է հաստատվում պետական վարկից: Շնորհիվ դրան հեշտ է

լինում ազդեցութուն գործել դյուղատնտեսութեան վրա՝ նրան ձևափոխելու նպատակով: Այստեղ ևս առանձին գյուղացիական տնտեսութիւնները շահերը գուզադիպում են ամբողջ տնտեսական շինարարութեան շահերի հետ:

Շուկայի գա- Սյժմ անցնենք կոտորումայի վառակի գյուղ- նահանգի Շունգայի գավառակի դասեեսա կա- գյուղատնտեսական կոոպերացիային: Այստեղ համարյա ամբողջ հողը (95%) կարտոֆիլի ցանքան է բռնում: Գյուղատնտեսական կոոպերացիան այստեղ սկսել է զարգանալ դեռ հեղափոխութիւնից առաջ: Շունգայի գավառակում բացված է առաջին կոոպերատիվ գործարանը: Այսպիսով կոոպերացիան զարգացել է հսկայական չափերով:

«Կարտոֆիլի Միութիւնը» 1923 թվին միացրել էր կարտոֆիլ վերամշակող 93 գյուղատնտեսական ընկերութիւն և 21 տեղական միութիւն:

Անցյալ տարի կարտոֆիլի կոոպերացիայի գործարանում վերամշակված է մոտ 5 միլիոն փութ կարտոֆիլ...

1923 թվին վողջ Ռուսաստանի ուշադրութիւնը գրավել էր Շունգայի գավառակը, վորտեղ տեղի յեր ունենում գյուղատնտեսական կոոպերացիայի կառուցած 500 ձիու ուժի

ելեկտրոկայանի բացման տոնակատարութիւնը: Յե՛վ ի՛նչ չեղավ հետևանքը. այն, վոր Շունգայի գավառակում կոոպերացման է լինթարկված բնակչութեան 95% այսինքն՝ յուրաքանչյուր 100 հոգուց միայն հինգ հոգին յեն դեռ թափառում միայնակ, իսկ 95 հոգին մտնում են ընդհանուր գյուղացիական կոոպերատիվ միութեան մեջ: Այժմ արդեն գոյութիւն ունի կարտոֆիլի կոոպերատիվները միութիւն, վորը միացնում է ընկերութեան 7 գործարան: Այդ միութիւնն ունի շատ ձեռնարկութիւններ. ոսլայի (կրակա-մալի) կատարելագործված գործարան, սղոցարան, շոգեաղաց՝ յեռհարկանի շենքով, ժողովրդական տուն և ամբողջ գաւառակով մեկ կոոպերատիվ հեռախոս. Շունգայի գավառակի յուրաքանչյուր գյուղ ունի կոոպերատիվ թեյարան իր ընթերցարանով:

Այժմ ելեկտրոկայանն ուժ է տալիս գործարաններին, լուսավորում է 43 գյուղի լւըը-ճիթներ, ուժ է տալիս էլեկտրոցանքսի համար. շունգացիներն սկսել են կարտոֆիլի համար հողը վարել ելեկտրական գութանով:

Ինչպես տեսնում ենք, Շունգայի գյուղատնտեսական կոոպերացիան իրեն համար մասնագիտութիւն է ընտրել կարտոֆիլը. նա միա-

ցնում ե կարտոֆիլ ցանող գյուղացիներին: Սակայն այդ չե Շունգայի գյուղատնտեսական կոոպերացիայի հիմնական տարբերութիւնը:

Այստեղ կոոպերացիան ձևափոխել ե գյուղատնտեսական ամբողջ արտադրութիւնը: Գյուղացիական տնտեսութիւն մթերքների սպառման ու վերամշակման հիման վրա ստեղծվել ե գործարանային մի ամբողջ արտադրողութիւն:

Շունգայի գյուղացիական տնտեսութիւնների ամբողջ արտադրութիւնը, խոստովելով վորևե մասնավոր միջնորդից, ընկնում ե խորհրդային պետական ու կոոպերատիվ կազմակերպութիւնների ձեռքը: Իր տնտեսական կենտրոնի՝ «Կարտոֆիլի Միութիւն» միջոցով Շունգայի գյուղացիական տնտեսութիւններն ամենասերտ կերպով կապված են պետական սոցիալիստական տնտեսութիւն հետ:

Այժմ դիտենք «Տրուգ» արտադրութիւնը: Այդ արտադրութիւնը կազմակերպվել ե դեռ 1920 թվին: Արտելը կազմակերպել են 12 գյուղացի, գլխավորապես այն պատճառով, վոր չափազանց դժվար եր աշխատել փոքրիկ հողամասերի վրա: Հենց միայն այն պատճառով, վոր միանալուց հետո հողն արդեն մի տեղ եր, աշխատանքը հեշտա-

ցավ: «Հենց տեղ հասար թե չե, ել մի նալիր— աշխատիր»,—ասում եյին գյուղացիները: Արտելի կազմակերպողի՝ Ալլոշինի 96 տարեկան ծերունի հորը բանդիտներն սպանել եյին: 1922 թվին բանդիտիզմի հետևանքով արտելը ցանել եր ընդամենը 8 դեսիատին հող: Բայց ե այնպես արտելի անդամները յետ չկանգնեցին գործից ե վերջին տարին արդեն ցանքսը հասցրին 73 դեսիատին: Ներկայումս արտելի մեջ ե մտնում 8 ծուխ՝ 50 շնչով: 20 թվին հողբաժնից ստացել են գութաններ, 2 հնձող ու սերմնացան մեքենա: Չնայած բանդիտների թալանին, ներկայումս ունեն 6 գութան, 6 ցաքան, 2 սերմնացան, 2 հնձող, 1 կալսող մեքենա, 1 ձիաքարը փոցխ, 1 ծղոտահատ, 3 արոր (1 ձիանի): Յերբ ինվենտարն ազատ ե, ձրի տալիս են գյուղացիներին ոգտվելու:

Մինչև 23 թիվը ստացած ամբողջ կտորից առանձնացնում եյին յուրաքանչյուրի բաժինը, բայց հողը մշակում եյին ընդհանուր ինվենտարով: 1923 թվին գարնանացանը մշակել են ու ցանել միասին ու միասին ել ծեծել:

«... Համեմատած գյուղացիական անհատական տնտեսութիւնների հետ, արտելը վորոշ նվաճումներ ունեցել ե. փոքր թվով ձիերով

մշակել են ավելի մեծ տարածութիւնն, սերմացուի պահասութիւնն չի զգացվել. ցանքսը, հենց գյուղացիների ասելով, ավելի լավ ե մշակված, քան իրենց մոտ»:

Այդ արտելի որինակով մենք առաջին անգամ ծանոթանում ենք հողագործութեան կուլտիւրով ձևին:

Յե՛վ իրոր, Վորոնցովսկի ընկերութեան անդամներն իրենց տնտեսութիւնը վարում են նույնպես, ինչպես շրջակա գյուղացիները: Շունգայի կոոպերացիայում նույնպես կենտրոնացած են արտադրութեան սպառումն ու վերամշակումը, բայց կոոպերացիայի յուրաքանչյուր անդամ դեռ իր անհատական, առանձին տնտեսութիւնն է վարում: Իսկ «Տրուզ» արտելում մենք արդեն տեսնում ենք «համայնական», սիատեղ աշխատանք: Տեսնում ենք, ինչպես գյուղացիական առանձին տնտեսութիւններից կազմվում է խոշոր գյուղատնտեսական արտադրութիւն՝ ընդհանուր կուլտիւրով աշխատանքով: «Տրուզ» արտելը ցույց է տալիս, վոր տնտեսութեան կուլտիւրովի գացիան հնարավորութիւնն է տալիս միջակին ու չքավորին բարձրացնելու իրենց տնտեսութիւնը:

Փորձենք այժմ միքանի յիզրակացութիւններ հանել կոոպերացիայի աշխատանքի մասին:

Մ ա ս Գ ա վ ո Ր «Կոոպերացիայի մասին» գյուղացու Շահերը կոոպերացիայի մեջ գուրգուկում են սոցիալիստական շինարարութեան և գյուղացիութեան տնտեսական կապի այն ձևն է, բնագիտութեան հետ հերիք.

միանում է սոցիալիստական շինարարութեան ընդհանուր շահերի հետ: Լենինյան այդ միտքը մենք հաստատել կարող ենք վերը հիշված մեր բոլոր որինակներով՝ և՛ սպառողական և՛ գյուղատնտեսական կոոպերացիայում գյուղացու անձնական ոգուտը գուրգուկում է ամբողջ սոցիալիստական շինարարութեան շահերին:

Մենք արդեն բերել ենք Լենինի այն խոսքերը, թե՛ պետք է սոցիալիզմը կառուցել այնպես, վորպեսզի «յուրաքանչյուր մանր գյուղացի կարողանա մասնակցել այդ կառուցմանը»: Այդ ամեննին չի նշանակում, վոր մենք գյուղացիներին սոցիալիստ ենք համարում: Մենք գյուղացուն պետք է մոտենանք հատկապես հենց վորպես մանր սեփականատիրոջ իր բոլոր առանձնահատկութիւններով ու նախապաշարումներով: Գյուղացու հետ միասին մենք կկարողանանք առաջ շարժվել միայն այն ժամանակ, յերբ գյուղացու համար շահավետ կլինի մեզ հետ առաջ

շարժվելը՝ նրա տնտեսութեան անմիջական շահերի տեսակետից:

Կոոպերացիան մեր պայմաններում ամբողջ խորհրդային տնտեսութեան բաղադրիչ մասն է, վորովհետև կոոպերացիան (դեռ մի կողմը թողնենք, վոր նա ղեկավարվում է կոմմունիստների ձեռքով) տնտեսապես սերտորեն կապված է պրոլետարական գիտատուրայի իշխող բարձունքների հետ, այն է՝ պետական արդյունաբերութեան, վարկային սիստեմի պետական ներքին ու արտաքին առևտրի մարմինների հետ:

Կոոպերացիայից իրական ոգուտ ստանալով, իր խնայողութունները կոոպերացիայի մեջ դնելով՝ գյուղացին այդպիսով իսկ դառնում է ամբողջ խորհրդային տնտեսութեան շինարարութեան մասնակիցը: Այնքան, վորքան գյուղացին շահագրգռված է իր կոոպերացիայի բարգավաճումով ու զարգացմամբ, նա շահագրգռված է նույնպես, վոր աճի ու ամրանա ամբողջ պետական տնտեսութեանը:

Միայն իր սեփական շահի մասին հոգացող մանր սեփականատիրոջից կոոպերացիան գյուղացուն դարձնում է ամբողջ պետական տնտեսութեան շինարարութեան գիտակից մասնակցողը:

Ահա թե ինչու Լենինն ասում էր, վոր կոոպերացիայի շնորհիվ գյուղացին նոր կարգերին

կանցնի «ըստ հնարավորին ավելի պարզ, թեթև ու գյուղացու համար մատչելի ճանապարհով»:

Ինչի՞ց պես է կոոպերացիայի վերջնական սկսի կոոպերացիան՝ նպատակն է՝ միացնել մանր գյուղացին:

Ղացիական տնտեսութունները և դարձնել խոշոր, կոլլեկտիվ տնտեսութուններ: Բայց կոոպերացիան իրեն խնդիր չի առաջադրում միանգամից իրականացնելու այդ նպատակը: Նա չի ասում, թե՝ «թո՛ղ քո մանր տնտեսութունը, արի կոոպերացիայի մեջ, վոր կոլլեկտիվ տնտեսութուն կառուցես»:

Ի՞նչ հետևանքներ կունենար, յեթե՛նա այդպես վարվեր: Ամենից առաջ մենք գյուղացուն կխրտնեցնեյինք կոոպերացիայից: Մանր սեփականատեր գյուղացին դեռ պատրաստված չէ մասսայապես կոլլեկտիվ տնտեսութեան անցնելուն: Կոոպերացիան պետք է սկսի այնպիսի միջոցներից, վորոնք հասկանալի յեն ու մատչելի յուրաքանչյուր գյուղացուն:

Նոր տնտեսական քաղաքականութեան մասին Լենինն ասել է, վոր այդ քաղաքականութունն «իրենից պրոգրեսս է ներկայացնում այն տեսակետից, վոր նա հարմարվում է ամենասովորական գյուղացու մակարդակին, վոր նա նրանից վոչինչ ավելի բարձր բան չի պահանջում»:

Լենինյան կոոպերատիվ ծրագիրը չեղում է

նրանից, վոր գյուղացուց վոչ մի «բարձր բան» չի պահանջում: Գյուղացիութեան՝ դեպի սոցիալիզմը գործած շարժման յեղակետը հանդիսանում է շահագրգռվածութունը, վորպես սեփականատեր-ապրանքարտադրող: Անցնելով մեկ աստիճանից մյուսը՝ գյուղացիական տնտեսութիւնը կոոպերացիայի միջոցով դանդաղ, բայց հաստատ կհասնի սոցիալիզմին:

Հիշենք մեր ասածներն սպառողական ու գյուղատնտեսական կոոպերացիայի մասին, և մենք հեշտութեամբ կհամոզվենք, վոր գյուղացիական տնտեսութեան կազմակերպման ասպարիզում՝ կոոպերացիայի կատարած աշխատանքի ընթացքում կարելի յէ նկատել յերկու ուղղութիւն:

ա) Գյուղի մատակարարումն արդյունաբերական արտադրութեան անհրաժեշտ ապրանքներով, գյուղացիական տնտեսութեան արտադրանքի սպառման կազմակերպումը յեւ գյուղացիական տնտեսութեան վարկավորումը:

Ապրանքների մատակարարման ասպարիզում առաջին հերթին պետք է տարբերել գյուղացու, վորպես սպառողի, պահանջների բավարարումը (առաջին անհրաժեշտութեան իրերը, մետաղ և այլն) և վորպես արտադրողի պահանջների բավարարումը (արտադրութեան միջոցներ, կենդանի ու մեռյալ ինվէստար):

Գյուղացու, վորպես արտադրողի, մատակարարումը, գյուղատնտեսական միջերջների սպառման կազմակերպումը և գյուղատնտեսութեան վարկավորումը գյուղատնտեսական կոոպերացիայի պարտականութիւնն է: Մնացած բոլոր ապրանքների մատակարարումն սպառողական կոոպերացիայի պարտականութիւնն է, վորը և արդյունաբերութիւնից դեպի գյուղատնտեսութիւնը ապրանք փոխանցելու գլխավոր ցանցն է:

բ) Գյուղատնտեսական արտադրութեան վերակերտումը, գյուղացիական տնտեսութիւնը կուլեկտիվիզացիայի հիմքերի վրա դնելը (կոմունաներ, կուլեկտիվ տնտեսութիւններ, արտելներ յեւ այլն):

Մասսայական կոոպերացման մենք պետք է մոտենանք հատկապես հենց մատակարարումն ու սպառումը կազմակերպելու աշխատանքների տեսակետից: Մենք, իրողք, տեսնում ենք, վոր գյուղում ամենից արագ զարգանում է սպառողական կոոպերացիան և գյուղատնտեսական կոոպերացիայի այնպիսի ձևերն, ինչպիսին են Վորոնցովսկի ընկերութիւնը, Շուգայի կոոպերատիվը: Հողագործութեան կուլեկտիվ ձևերը դեռ մասսայական բնույթ չեն կրում. գյուղացիական տնտեսութիւնների միայն մեկ ու կես տոկոսն է անցել կուլեկտիվ ձևերին: Մատակարար-

վերով և սպառելով իր արտադրանքը կոոպերացիայի միջոցով, դրանից գյուղացին անմիջական շահ ունի, նա աժան գնում է և թանգ վաճառում: Միևնույն ժամանակ այդպիսի կոոպերացումը հառաջադիմական մի հսկայական քայլ է սոցիալիստական շինարարութեան ճանապարհին: Քանի վոր այդպիսի կոոպերացումն աստիճանաբար հաղթանարում է մասնավոր առևտրական կապիտալին, վերացնում է այն ճեղքվածքը, վոր գյուղացիուն ունի պետական ձեռնարկութեան ու գյուղացիական տնտեսութեան միջև, մի ճեղքվածք, վորի միջով ներս է խցկվում մասնավոր կապիտալը:

Նման կոոպերացումն եյապես դանդաղեցնում է գյուղի շերտավորման թափը, քանի վոր նա հնարավորութիւնն չի տալիս, վորպեսզի կուլակութիւնը հարստանա վաշխառութեան և առևտրի միջոցով:

Նման կոոպերացումը կապում է գյուղացիական տնտեսութիւնը պետական ամբողջ տնտեսութեան հետ, հնարավորութիւնն է տալիս պետութեանն իր ծրագրային ղեկավարութեամբ ընդգրկելու գյուղացիական առանձին տնտեսութիւնները հսկայական մեծամասնութիւնը:

Այդ, իհարկէ, չի նշանակում, վոր կուսակցութիւնը ներկայումս չպետք է աջակցի

տնտեսութեան կոլլեկտիվ ձևերի վարդացմանը: Կուսակցութեան 14-րդ համագումարի բանաձևը պահանջում է «ամեն կերպ աջակցել գյուղատնտեսութեան կոլլեկտիվացման բազմազան ձևերին»: Բայց կուսակցութիւնը հաշվի յէ առնում, վոր գյուղացիութիւնը դեռ պատրաստ չէ մասսայականորեն կոլլեկտիվ տնտեսութեան անցնելու համար: Հատկապէս մատակարարման ու սպառման կոոպերացումն է, վոր նախապատրաստում է այդ անցումը:

Կոոպերացիայի մեջ մտնելով՝ գյուղացին ուզում է աժան գնել իրեն պետք յեղած ապրանքը և ձեռնտու գներով վաճառել իր սեփական տնտեսութեան արտադրանքը:

Գյուղացին մտնում է կոոպերացիայի մեջ վորպէս մանր սեփականատեր: Կարևոր է, վոր գյուղացին կանգնի կոոպերացման ճանապարհի վրա: Անմիջական շահը գյուղացուն կտանէ ավելի ու ավելի հեռու դեպի տնտեսութեան համախրմբումը, դեպի կոլլեկտիվացումը:

Կոոպերացիայի Գյուղատնտեսական կոոպե-  
աճումը. րացիայի աճումը ցույց է տա-  
լիս հետևյալ դիագրամման.

Գյուղաց. տնտեսութիւն-  
ներից կոոպերացված է

1924 թվին	.	.	.	.	12,5 <sup>0</sup> / <sub>0</sub>
1925 թվին	.	.	.	.	24 <sup>0</sup> / <sub>0</sub>

Գյուղատնտեսական ու վարկային կոոպերացիան 1924-1925 թվին ունեւր 1 միլիարդ 200 միլիոն ուրբու շրջանառութիւն (1923-24 թվին 2 անգամ պակաս): Նա սպասարկում է գյուղացիական արտադրութեան բոլոր ճյուղերը. յերկու տարվա մեջ նա գյուղին տվել է 10 հազարից ավելի տրակտոր:

Մեծ զարգացում են ստացել գյուղատնտեսական կոոպերացիայի հատուկ, մասնագիտական կազմակերպութիւնները: Ստեղծվել են մի շարք կենտրոնական միութիւններ, վորոնք ընդգրկում են գյուղատնտեսութեան վորոշ ճյուղերը. Յուղկենտրոն, Վուշկենտրոն, Կարտոֆիլի Միութիւն, Գինե-մրգի Միութիւն (գինեգործութիւն), Ծխախոտի միութիւն և այլն: Գյուղատնտեսական ամբողջ արտադրութեան համեմատութեամբ այդ կենտրոններից 1924-25 թվին անցել է՝

Յուղ	. . . . .	42 <sup>0</sup> / <sub>0</sub>
Պանիր	. . . . .	50 <sup>0</sup> / <sub>0</sub>
Չու	. . . . .	9 <sup>0</sup> / <sub>0</sub>
Կարտոֆիլ (վերամշակված)	. . . . .	41 <sup>0</sup> / <sub>0</sub>
Վուշ	. . . . .	18 <sup>0</sup> / <sub>0</sub>
Ծխախոտ	. . . . .	48 <sup>0</sup> / <sub>0</sub>

Սպառողական կոոպերացիան այժմ միացնում է բոլոր գյուղացիական տնտեսութիւնների 25 տոկոսը, այսինքն մեկ քառորդը:

Բերենք թվեր կոլեկտիվ տնտեսութիւնների աճման մասին.

	1923 թ.	1924 թ.
Կոմսունաներ.	1804	1673
Արտելներ	7293	7814
Հասարակակ. մշակման ընկ.	3841	4362
<hr/>		
Ընդամենը՝	12938	13849.

Հայաստանում առ 1-ն հոկտեմբերի 1924 թվի յեղել են.

Սպառողական ընկերութիւններ	. . . . .	65
Տնայնագործ արհեստանոց, արտելներ	. . . . .	12
Աշխատանքի	. . . . .	10
Կաթնատնտեսական	. . . . .	34
Մեղվաբույծներ	. . . . .	8
Այգեգործներ	. . . . .	7
Ծխախոտագործների	. . . . .	1
Շերամապահների	. . . . .	1
Գյուղատնտեսական ընկերութիւններ	. . . . .	8

Գյուղատնտեսական մթերքներ մշակող ու վաճառահանող այս 59 կոոպերատիվների անդամների ընդհանուր թիվն է յեղել 3.674, կոոպերացած ժողովրդի ընդհանուր թիվը՝ 18,370:

Կոոպերացիայի այս թվերը ցույց են տալիս վորոշ աճում: Համեմատած գյուղացիական տնտեսութիւնների ընդհանուր թվի հետ՝ այդ դեռևս մի կաթիլ է ծովում, ընդամենը 1<sup>1</sup>/<sub>2</sub> տոկոս. չպետք է գերազնանատել այդ հաջողութիւնները:

Ամենից առաջ հարկավոր է հիշել, վոր, համեմատած նախապատերազմյան ժամանակի հետ, մենք կոոպերացիայում անկասկած յետ ենք ֆուլմ գյուղատնտեսութեան զարգացման թափից: Այն ժամանակ, յերբ գյուղատնտեսութեան ընդհանուր առմամբ մոտեցել է նախապատերազմյան մակարդակին, մենք գյուղատնտեսական կոոպերացիայի ասպարիզում հասել ենք միայն նախապատերազմյան մակարդակի 50-60 տոկոսին: Բացի դրանից, գյուղատնտեսական կոոպերացիայի աշխատանքի վորակն էլ շատ հաճախ չի համապատասխանում նրա քանակի աճման հաշուութեաններին:

Կոոպերացիայի կազմն ու նրա ներքևում բերված թվերը ցույց են տալիս գյուղատնտեսական կոոպերացիայի կազմը: Տեղեկագրի մեջ մտել են ընդամենը 470 հազար 121 տնտեսութեան ըստ մշակողական ու արտադրողական շրջանների: Դրանցից (տոկոսներով).—

Առանց լծկան անասունի	26,3
1 գլուխ լծկան ունեցող	51,5
2 » » »	15,3
3 » » »	5,2
4 և ավելի »	1,7

Ընդամենը՝ 100,0

Ավելի ճիշտ կլիներ 2-րդ և 3-րդ խմբակի տնտեսութեանները համարել միջակներ, իսկ 1-ին խմբակը՝ չբավոր: Այսպես ընդունելով՝ միջակը կազմում է 66,8 տոկոս, իսկ միջակը չբավորի հետ միասին՝ 93,1 տոկոս:

Ինչպես տեսնում ենք, կոոպերացիայի կազմն ընդհանուր առմամբ համապատասխանում է գյուղի ընդհանուր կազմին: 14-րդ կուսկոնֆերանսը վորոշել է. «Վորպեսզի կոոպերացիան առավելագույն չափով ընդգրկի գյուղի տնտեսական կյանքի բոլոր պրոցեսները, անհրաժեշտ է գյուղատնտեսութեամբ զբաղվող բնակչութեան բոլոր շերտերին՝ իրավունք տալ մասնակցելու կոոպերացիային»: Այդ նշանակում է, վոր կոոպերացիայի մեջ ընդունվում է նույնիսկ կուլակը:

Դրա շնորհիվ մենք կոոպերացիայի ներսում անխուսափելիորեն պետք է ունենանք ու կունենանք գյուղի զանազան խավերի միջև տեղի ունեցող պայքար:

Պարզ է, վոր կուլակը պետք է փորձի ոգտագործել կոոպերացիան իր մասնավոր կուտակման նպատակների համար:

14-րդ կուսկոնֆերանսի նույն բանաձևում վերոհիշյալ մեջբերումից անմիջապես հետո մենք կարդում ենք.

«Կոոպերացիայում գյուղացիութեան մեծա-

մասնության ղեկավարող ազդեցությունն ապահովելու համար բոլոր տեսակի կազմակերպությունները պետք է մտցնեն իրենց կանոնադրքերի մեջ այնպիսի սահմանափակումներ, վորով անհնար դառնա ընկերության վարչության մեջ ակնհայտ կուլակային տարրեր մտնելը»:

Կուսակցության և առաջին հերթին գյուղական կուսակազմակերպությունները խնդիրն է՝ հսկել, վորպեսզի կոոպերացիան չընկնի կուլակի ազդեցության տակ:

Կուլակը կովում է միջակի համար, կուլակը ձգտում է միջակին տանել իր յետևից: Յե՛վ միջակի համար իր այդ մղած կռիվը կուլակը կոոպերացիա յե փոխադրում: Ահա թե ինչու կոոպերատիվ կազմակերպությունները համար կարելի յե ապահովել սոցիալիստական զարգացումն միայն «ոգտագործելով, հաղթահարելով ու նեղելով կապիտալիստական տարրերին»:

### ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅԵՐԿՈՒ ՈՒՂԻՆ

Գյուղի գաղափարը գացման սոցիալիստական ու կապիտալիստական յերկրներում: Ի՞նչպե՛ս է այնտեղ ընթանում այդ աճումը:

Այնտեղ տեղի յե ունենում հարուստ գյու-

ղացիների վերին և փոքր խավերի հարստացումը, իսկ միաժամանակ աղքատանում է ու քայքայվում գյուղացիական տնտեսությունների հիմնական մասսան: Կազմվում են խոշոր կալվածներ, գյուղացիական մեծ ու հարուստ տնտեսություններ, և միևնույն ժամանակ աճում է բատրակների ու հողագուրկ գյուղացիների թիվը: Գյուղի այդպիսի զարգացմանն ամեն կերպ նպաստում է քաղաքային բուրժուազիան, վորը շահագրգռված է գյուղական բուրժուազիա ստեղծելու մեջ: Բուրժուազիան բազմաթիվ գեներներ ունի գյուղի վրա ճնշում գործ դնելու համար. գյուղացիական տնտեսությունը կախում ունի կապիտալիստական արդյունաբերությունից, կապիտալիստական վարկային հիմնարկներից, կապիտալիստական պետական իշխանությունից: Բուրժուազիան ել ոգտագործում է բոլոր միջոցներն ու հնարավորությունները, վորպեսզի դրդի գյուղը դեպի կապիտալիստական զարգացման ուղին, դեպի քչերի հարստացման և գյուղացիական մասսայի աղքատացման ուղին:

Այդ յեղանակով զարգացման մեջ շահագրգռված է միայն գյուղի կուլակային մասը: Գյուղացիական ավերոջ մասսան շահագրգռված է գյուղի սոցիալիստական յեղանակով զարգացման մեջ:

ինչպես տեսանք, սոցիալիստական յեղանակով զարգացումն ամենից առաջ այն տարբերությունն ունի, վոր գյուղի վերելքը կատարվում է վոչ թե մի բուռ կուլակներին հարստացման միջոցով, այլ բարձրանում է գյուղացիության ամբողջ մասսայի բարեկեցությունը: Դրան կարելի չէ հասնել միայն կոոպերացիայի միջոցով, միացնելով գյուղացիական մանր ցրված անտեսությունները: Մեր յերկրում գյուղը կարող է ընթանալ միայն զարգացման սոցիալիստական ճանապարհով:

«Հենց այն պատճառով, վոր քաղաքը գյուղի դեկավարն է, իսկ քաղաքում իշխում է պրոլետարիատը, վորն իր ձեռքում պահում է ժողովրդական անտեսության իշխող բարձունքները, հենց այդ պատճառով գյուղացիական անտեսություններն իրենց զարգացման մեջ պետք է ընթանան մի այլ ուղիով, այն է՝ սոցիալիստական շինարարության ուղիով (Ստալին):»

Այդ է հենց «լենինյան կոոպերատիվ ծրագիրը», վորի մասին մենք վերևում խոսեցինք:

Լենինյան կոոպերատիվ ծրագիրն ու կուսակցութեան անդամակցության անհրաժեշտությունը կարող է գարզանալ սոցիալիզմի ուղղությամբ: Լենինյան այս ուսմունքը

քին ամենախիստ կերպով հակասում է արոցկիզմը: Տրոցկիզմն ապացուցում է, վոր բանվոր դասակարգը, հաղթանակելով բուրժուազիային, պետք է սկսի կռվել գյուղացիության դեմ: Տրոցկիզմը չի հավատում, վոր հնարավոր է պրոլետարիատի ու գյուղացիության միատեղ շարժումը դեպի սոցիալիզմ:

Այժմ դեպի լենինյան կոոպերատիվ ծրագիրը թերահավատություն է ցույց տալիս նաև այն ոպպոզիցիան, վորի գլուխն էլին անցիլ կուսակցության 14-րդ համագումարում ընկ. ընկ. Կամենևն ու Զինովյեը: Մենք նախ ընթաց պրոյեցում կարգացինք ոպպ զիցիայի տեսակետներին մասին, վոր կուլակը զարձել է գյուղի տերը: Դրանով ոպպոզիցիան ուզում է ապացուցել, վոր գյուղն արդեն գնում է զարգացման կապիտալիստական ուղիով: Ոպպոզիցիան իր բոլոր յելույթներում լուռթյան եր մատնում Լենինի «կոոպերացիայի մասին» հոդվածը:

Նոր ոպպոզիցիան, ինչպես և արոցկիզմը, չի հավատում գյուղի սոցիալիստական զարգացմանը: Այդպիսով իսկ ոպպոզիցիան կորցնում է իր հավատը դեպի մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը, քանի վոր սոցիալիզմ կառուցել կարելի չէ միայն գյուղացիության հետ միասին:

ՀԱՐՅԵՐ

1. Ինչո՞ւ վարձկալուծյան հեշտացումն ու բանվորական ուժ վարձելու թույլտվությունը համապատասխանում է չքաղտրների ու միջակների շահերին:
2. Ի՞նչ անելիքներ ունի սպառողական կոոպերացիան:
3. Ի՞նչ խնդիրներ ե առաջադրում էրեն գյուղատնտեսական կոոպերացիան:
4. Ինչո՞ւ յեր Լենինն ասում, վոր կոոպերացիայում գյուղացիության մասնավոր շահը զուգադիպում է սոցիալիստական շինարարության ընդհանուր շահերի հետ:
5. Ինչո՞ւ գյուղացիության մասսայական կոոպերացումը պետք է սկսել սպառման ու մատակարարման կազմակերպումով:
6. Վորո՞նք են կոոպերացիայի նվաճումները:
7. Ի՞նչ պայքար է տեղի ունենում կոոպերացիայի ներսում:
8. Ի՞նչ տարբերություն կա գյուղի զարգացման սոցիալիստական ու կապիտալիստական յեղանակների մեջ:

ԱՇԽԱՏԱՆՔ

1. Կազմիր «Գյուղատնտեսական կոոպերացիայի խընդիրները» պլակատ: Պլակատի մի կողմի վրա գրեր խնդիրների ցուցակը, մյուս կողմի վրա զետեղիր այնտիսի նկարներ, վորոնք պարզաբանում են կոոպերացիայի աշխատանքը: Այս աշխատանքն ավելի հեշտ է կատարել խմբովին:
2. Պատրաստիր մի դիագրամմա, վոր ցույց տա, թե գյուղացիական տնտեսության վոր մասն է (մեկ քառորդը) միացում սպառողական կոոպերացիան:

ՀՀ Ազգային գրադարան



NL0925973

1

2287

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.